Սևան համայնքի բյուջեի 2023թ. 1-ին եռամսյակի սեփական եկամուտների պլանը կատարվել է 120.9%-ով

2023թ. ապրիլի 20-ին Սևան համայնքի ավագանու հերթական նիստում ներկայացվել էր Սևան համայնքի 2023թվականի բյուջեի 1-ին եռամսյակի կատարողականը, որը համայնքի ավագանին ընդունեց ի գիտություն:
Համաձայն ներկայացված հաշվետվության՝ Սևան համայնքի 2023թ.-ի առաջին եռամսյակի բյուջեի եկամուտների /վարչական և ֆոնդային բյուջեները միասին/ պլանը կատարվել է 100.6%-ով: 534.5 մլն. դրամ պլանային եկամուտների դիմաց հավաքագրած և պետական բյուջեից հատկացված դոտացիան կազմել է 537.7 մլն. դրամ, գերակատարումը կազմել է 3.2 մլն. դրամ, այդ թվում՝ վարչական բյուջեի գծով առկա է 25.3 մլն. դրամ եկամուտների գերակատարում, ֆոնդային բյուջեի գծով թերակատարումը կազմել է 22.1 մլն. դրամ:

Համայնքի 2023թ.-ի առաջին եռամսյակի բյուջեի վարչական մասը կատարվել 107.3%-ով / պլան՝ 345.0 մլն. դրամ, փաստացի՝ 370.3 մլն. դրամ/: Վարչական բյուջեում սեփական եկամուտները կատարվել են 120.9 %-ով / պլան՝ 116.4 մլն. դրամ, փաստացի՝ 140.8 մլն. դրամ/:

Գերակատարումը կազմել է 24.3 մլն դրամ կամ 20.9 %: Եկամտատեսակներից գերակատարվել է գույքահարկ շենք-շինությունների գծով՝ 235.3%, փոխադրամիջոցների գույքահարկը՝ 146%, տեղական տուրքերը՝ 115.9 % և այլն, իսկ մնացած եկամտատեսակների, այդ թվում՝ վարձակալության, աղբահանության վարձավճարների գծով առկա են պլանային թերակատարումներ: Ոչ հարկային եկամուտների գծով գերակատարվել են ինքնակամ կառույցների օրինականացման և այլ եկամուտների գծով եկամտատեսակները, իսկ ուսումնական, ծնողական վճարների մասով օբյեկտիվ պատճառներով առկա է թերակատարում:

Հարկ է նշել, որ 2021թ. հունվարի 1-ից գործողության մեջ է դրվել անշարժ գույքի հարկը, որը միավորել է նախկին գույքահարկը և հողի հարկը, ինչպես նաև առանձնացվել է փոխադրամիջոցների գույքահարկը ֆիզիկական և իրավաբանական անձանց գծով: Չնայած առկա բազմաթիվ անճշտություններին՝ ներդրված նոր ծրագրերն աշխատում են անխափան, զուգահեռ աշխատում են նաև գույքահարկերի նախկին ծրագրերը:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտները կատարվել են 88.3 %-ով / ճշտված պլան՝ 189.5 մլն. դրամ, փաստացի՝ 167.4մլն. դրամ /:

Համայնքի ֆոնդային բյուջեի եկամուտների թերակատարման պատճառը օբյեկտիվ է՝ կապված համայնքում հողերի և հիմնական միջոցների օտարման բացակայության հետ:

Նախորդ՝ 2022թ.-ի 1-ին եռամսյակի համեմատությամբ համայնքի բյուջեի եկամուտներն ավելացել են 146.3 մլն. դրամով կամ 37.4 տոկոսով, այդ թվում՝ վարչական մասով 37.1 մլն դրամի չափով /11.1 տոկոս/, ֆոնդային մասով՝ 109.3 մլն. դրամով /187.8 տոկոս/: Սեփական եկամուտներն ավելացել են 52.5 մլն. դրամով կամ 59.5 տոկոսով։

Հիմք ընդունելով եկամուտների կատարման ցուցանիշները՝ համապատասխանաբար կատարվել են համայնքի՝ 2023թ. առաջին եռամսյակի բյուջետային ծախսերը: Համայնքի բյուջեի ծախսերը կատարվել են 82.1 %-ով: 574.6 մլն. դրամ պլանային

ծախսերի դիմաց փաստացի կատարվել է 471.7 մլն. դրամի ծախս, կամ թերակատարումը կազմել է 102.9 մլն. դրամ, կամ 17.9 % :

Վարչական բյուջեի ծախսերը կատարվել են 104.1 %-ով (պլան՝ 345.0 մլն. դրամ, փաստացի՝ 359.2 մլն. դրամ), գերակատարումը կազմել է 14.2 մլն. դրամ /4.1 տոկոս/: Վարչական բյուջեի փաստացի ծախսերի 32.5%-ը կամ 116.6 մլն. դրամ կազմել են կրթության և մշակույթի ծախսերը, 73.4 մլն.դրամ /20.4տոկոս/՝ ընդհանուր բնույթի համայնքային ծառայությունները՝ 46.4մլն. դրամ /12.9 տոկոս/՝ սանիտարական մաքրման ծախսեր:

Ըստ առանձին ոլորտների՝ համայնքի 2023թ. առաջին եռամսյակի բյուջեի ծախսերը կատարվել են հետևյալ չափերով՝ կրթության ծախսերը՝ 94.8 % , մշակույթի ծախսերը՝ 92.4%, սանիտարական մաքրման ծախսեր 84.4 %:

2023թ. համայնքի առաջին եռամսյակի բյուջեի ֆոնդային մասի ծախսերը կատարվել են 79.3 %-ով (պլան՝ 292.6մլն. դրամ, փաստացի ծախս՝ 232.0 մլն. դրամ): Համայնքի 2023թ. առաջին եռամսյակի ֆոնդային բյուջեից վճարվել է 232.0 մլն. դրամ ասֆալտապատման, փոսային հիմնանորոգման համար, այդ թվում՝ նախորդ տարվանից տեղափոխված պարտքեր:

2023թ. հունվարի 1-ի դրությամբ վարչական բյուջեի գծով կուտակվել են միայն ընթացիկ պարտքերը, որոնք մարվել են 1-ին եռամսյակի ընթացքում: 2023թ. հունվարի 1-ի դրությամբ ֆոնդային բյուջեի գծով առկա էր 527.0 մլն. դրամի պարտք, այդ թվում՝ 13.1 մլն դրամը գյուղական բնակավայրերից տեղափոխված պարտքեր:

2023թ.-ի 1-ին եռամսյակի ընթացքում մարվել է 229.6մլն. դրամ պարտք, որը 2022թ.-ից տեղափոխված ճանապահաշինության գծով էր: Դատարանի վճռով դուրս է գրվել ևս 2.5 մլն. դրամի՝ 2015թ.-ից տեղափոխված ճանապարհների հիմնանորոգման աշխատանքների գծով պարտք:

2023թ.-ի ապրիլի 1-ի դրությամբ համայնքի ֆոնդային բյուջեի ընդհանուր պարտքը կազմում է 229.6 մլն. դրամ: